ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի օգոստոսի 4-7-ը
Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա)
գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը**

Գագիկ Մկրտչյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի խորհրդական

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

Գործուղման վայրը՝ Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն)

Գործուղման ժամկետները՝ 04.08.2017-07.08.2017

4. **Հրավիրող կողմը**

ՌԴ ֆինանսների նախարարություն, ՌԴ պետական գանձարան

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

Հանդիպումներ ՌԴ ֆինանսների նախարարի տեղակալ Ալեքսեյ Մոիսեևի և ՌԴ պետական գանձարանի ղեկավար Անդրեյ Յուրինի հետ՝ ադամանդագործության և ոսկերչության ոլորտներում հետագա համագործակցության արդյունավետության բարձրացման, ինչպես նաև ոսկերչական ապրանքների հարգադրոշմների փոխադարձ ճանաչման հարցերի քննարկման նպատակով:

6. **Քննարկված թեմաները**

- ՌԴ պետական գանձարանից և ԱԼՌՈՍԱ բաժնետիրական ընկերությունից հայկական ադամանդագործական ընկերություններին մատակարարվող ալմաստի հումքի քանակի, որակական հատկությունների և պրոֆիլային արդյունավետության հետ կապված կոնկրետ հարցերի բարձրացում՝ հիմնվելով հայկական ադամանդագործական ընկերություններից ստացված տեղեկատվության վրա
- ՌԴ պետական գանձարանից հայկական ընկերություններին ալմաստի հումքի մատակարարումները խոչընդոտող խնդրի՝ հայկական ընկերությունների կողմից ապահովադիր վճարի դրույթը տիպային պայմանագրից հանելու հարցի լուծման ուղիների քննարկում

- ՀՀ և ՌԴ կողմից ոսկերչական ապրանքների հարգադրոշմների փոխադարձ ճանաչման հարցերի քննարկում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Կայացած հանդիպումների ընթացքում ՌԴ ֆինանսների նախարարի տեղակալ Ալեքսեյ Մոիսեևին, ՌԴ պետական գանձարանի ղեկավար Անդրեյ Յուրինին և նրանց աշխատակազմերի մի շարք պատասխանատու պաշտոնյաներին մանրամասն ներկայացվել է Հայաստանի Հանրապետությունում ադամանդագործության և ոսկերչության զարգացման ներկա ընթացքը և հեռանկարները, ընդգծվել է, որ ոլորտի հետագա զարգացումը մեծապես կախված է հանդիպման ժամանակ բարձրացված և քննարկվող հարցերի արդյունավետ լուծումներից:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպումների ընթացքում ձեռք են բերվել հետևյալ պայմանվորվածությունները.

- ՌԴ պետական գանձարանի և ԱԼՌՈՍԱ ԲԸ հետ համատեղ ուսումնասիրել հայկական ընկերությունների ալմաստի հումքի նկատմամբ պահանջարկը՝ այն հնարավորինս արդյունավետ բավարարելու նպատակով: Ռուսական կողմը ցանկություն հայտնեց այցելել Հայաստանի Հանրապետություն՝ իրավիճակին տեղում ծանոթանալու նպատակով
- ՌԴ պետական գանձարանից հայկական ընկերություններին ալմաստի հումքի մատակարարումները խոչընդոտող խնդրի՝ հայկական ընկերությունների կողմից ապահովադիր վճարի դրույթը տիպային պայմանագրից հանելու որպես հնարավոր լուծման տարբերակ առաջարկվեց ՀՀ կառավարության կողմից երաշխիքային նամակի տրամադրումը ՌԴ ԳՈՒՐԱՆ-ին, որի դեպքում վերջինս համաձայն է տիպային պայմանագրից հանել ապահովադիր վճարի վերաբերյալ դրույթները:
- ՀՀ և ՌԴ կողմից ոսկերչական ապրանքների հարգադրոշմների փոխադարձ ճանաչման հարցի վերաբերյալ պայմանավորվածություն ձեռք բերվեց ՌԴ ֆինանսների նախարարության մասնագետների հետ համատեղ քննարկել խնդիրը և ներկայացնել առաջարկներ հարցի լուծման ուղղությամբ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Նշված խնդիրների արդյունավետ լուծումը կապահովի ոլորտի հետագա աճի առաջանցիկ տեմպը:

10. Գործուղվողը

Գագիկ Մկրտչյան

11. **Ստորագրությունը, ամսաթիվը**

08.08.2017